

Է. ՖՐՈՄԻ ՀՈՒՄԱՆԻՍՏԱԿԱՆ ՀՈԳԵՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գոհար Սարգսյան

Նշանավոր հոգեբան, փիլիսոփա, մեծ հումանիստ և նեոֆրեյդիզմի հիմնադիր Էրիխ Ֆրոմը (1900-1980) ձգտում էր լուծում տալ մարդկային կեցության հիմնական հակասություններին, «առողջ հասարակության» ստեղծման համար ուղիներ որոնելու խնդրին՝ հենվելով հումանիստական բարոյականության սկզբունքների և արժեքների վրա: Ընդ որում, նրա հայեցակարգային դիտարկումներն ու մշակումները կարևոր և ինքնատիպ ներդրում են այդ ոլորտում: Գաղափարական հիմնական գծերով Է. Ֆրոմը հակադրվում էր իր ուսուցչի՝ Զ. Ֆրեյդի հայեցակարգին, սակայն պետք է նշենք, որ Ֆրեյդի առաջ քաշած և զարգացրած հոգեվերլուծությունը՝ որպես տեսություն, Է. Ֆրոմի մասնագիտական հետաքրքրությունների համար կարևորագույն հիմք էր: Միաժամանակ հայտնի է, որ Ֆրոմի աշխարհայացքի ձևավորման վրա մեծ ազդեցություն է ունեցել նաև մարդու մասին օրթոդոքսալ հուդայականության ուսմունքը, Կ. Մարքսի հեղափոխական ոգին, Յ. Բախտվենի աշխատությունը մայրիշխանական հասարակությունների վերաբերյալ, ինչպես նաև 20-րդ դարի ճապոնացի նշանավոր փիլիսոփա, բուդդայագետ, արևմուտքում մեծ հռչակ վայելող Դ. Սուճուկին, որի հետ համատեղ Ֆրոմը հրատարակել է «Ձեն-բուդդայականությունը և հոգեվերլուծությունը» աշխատությունը¹: Է. Ֆրոմը իր գաղափարական որոնումներում ժամանակ առ ժամանակ մտովի վերադառնում էր իր երկու «հոգևոր նախնիներին»՝ Կ. Մարքսին² և Զ. Ֆրեյդին՝ փորձելով համադրել այդ երկու մտածողների հիմնարար գաղափարները:

Է. Ֆրոմի գիտական հետաքրքրությունների կենտրոնում մշտապես եղել են մարդը և նրա կեցության խնդիրը, գոյաբանական մարտահրավերները: «Քրիստոսի մասին դոգման» գրքի մասին հեղինակը գրում է.

¹ Մանրամասն տե՛ս **Р. Фрейджер, Д. Фейдимен**, Личность. Теории, упражнения, эксперименты, 6-е международное издание, Санкт-Петербург, 2006, ст. 533.

² Ֆրոմը միանգամայն դրական էր վերաբերվում Մարքսի՝ սոցիալիզմի տեսությանը՝ միաժամանակ մատնանշելով այդ տեսության մեջ հոգեբանական ռակուրսի բացակայությունը և դրա սահմանափակ լինելը:

«Այս գրքի հիմնական գաղափարը այն է, որ ժամանակակից մարդը թեև ազատագրվեց մինչևանհատական հասարակության շղթաներից, որոնք միաժամանակ և՛ սահմանափակում էին նրան, և՛ ապահովում նրա անվտանգությունն ու հանգիստը, այնուամենայնիվ, ազատություն ձեռք չբերեց ինքնիրացման, այսինքն՝ ինտելեկտուալ-զգայական ունակությունների առումով: Ազատությունը մարդուն տվեց անկախություն, ռացիոնալություն, բայց միաժամանակ մեկուսացրեց նրան՝ նրա մեջ արթնացնելով անկարողության, տագնապի զգացումներ»¹:

Ըստ Ֆրոմի՝ էվոլյուցիայի ընթացքում մարդիկ կորցրել են նախապատմական միասնությունը և կապը բնության հետ, բայց միաժամանակ զարգացրել են մտածողության, կանխատեսման և երևակայության ընդունակությունները: Ինքնագիտակցության զարգացումը ծնում է մենության, մեկուսացման զգացողություններ, և մարդը, որպեսզի ազատվի դրանցից, ձգտում է կրկին վերամիավորվելու բնության և իր նմանների հետ: Ֆրոմը նաև պարզաբանում է, որ մարդը չի ձևավորվում սուսկ որպես կենսաբանական և գենետիկ գործոնների ամբողջություն, «ծեփածո», մարդը նաև միայն հասարակական հանգամանքների ծնունդ չէ, նա իր մեջ խտացնում է այդ բոլոր գործոնների համադրումը: Ըստ այդմ՝ հոգեբանը հանգում էր այն համոզման, որ «պատմության գաղտնիքներին հասնելու և դրանք բացահայտելու համար միայն հոգեբանական բացահայտումները շատ քիչ են: Անհրաժեշտ է հաշվի առնել և՛ հասարակական պայմանների, և՛ մշակութային ազդակների հարաբերակցությունը»²:

Հետևելով հոգեբանության և սոցիոլոգիայի բուռն զարգացմանը՝ Է. Ֆրոմը գալիս է այն եզրահանգման, որ 20-րդ դարի «ներոզները» անհնար է բացատրել միայն կենսաբանական գործոններով, և ստեղծում է «նոր մարդու և նոր հասարակության» իր սեփական հայեցակարգը, ըստ որի՝ արտադրությունը պետք է ծառայի մարդուն, և ոչ թե տնտեսությանը, դրա բարձրագույն նպատակը պետք է լինի մարդկության բարօրությունը, տառապանքների վերացումը: Նա նկատում է, որ մարդուն հատուկ է ողբերգականի զգացողությունը, մարդը գիտակցում է մահվան անխուսափելիությունը որպես կյանքի **ողբերգական կողմ**: Յուրաքանչյուր մշակույթ դրան յուրովի է վերաբերվում և այդ հիմնախնդիրը հաղ-

¹ Гуревич П. С. Партитура бессознательного и уроки истории // Э. Фромм, Догмат о Христе. М., 1998, ст. 177.

² Նույն տեղում, էջ 7:

թահարում է՝ տվյալ հասարակարգին և հասարակական հոգեբանությանը համապատասխան¹: Հոգեվերլուծությունը նպաստեց մարդու մասին գիտելիքների խորացմանն ու հարստացմանը, սակայն, ըստ Ֆրոմի, Ֆրեյդի ուսմունքը չպատասխանեց այն հարցին, թե ինչպես պետք է ապրի և ինչ պետք է անի մարդը: Այս համատեքստում նրան չի բավարարում նաև Կ. Յունգի խորքային վերլուծության հոգեբանությունը, քանի որ ցույց չեն տրվում մարդկային գոյության և դրա իմաստի բացահայտման ուղիները: Զ. Ֆրեյդը այդ հարցի լուծումը կապում էր կրոնի հետ, ըստ որի՝ մարդկության զարգացման հիմքում պետք է դրված լինի սեփական թերաթեքության բարդոյթի հաղթահարումը, ինչը կարող է անել միայն ազատ մարդը. նա պետք է կարողանա ճիշտ ընկալել և գնահատել իրականությունը, վստահել սեփական ուժերին և ճիշտ կիրառել դրանք: Մարդու հիմնախնդրի միակ հիմնավորված պատասխանը նա համարում էր բարձր ինտելեկտը և բնագոյային մղումների զսպումը: Միայն այդ դեպքում «Ինտելեկտը, գիտական ոգին, բանականությունը ժամանակի ընթացքում կդառնան մարդկային հոգեկան կյանքի տերն ու տիրակալը»²: Որպես հասարակությանը միավորող հզոր լիցք և երաշխավոր՝ Ֆրեյդը առանձնացնում է կրոնը՝ անվանելով այն «հասարակական ներոգ», որը «թուլացնում է մարդկանց վախը վտանգների և անսպասելի փոփոխությունների հանդեպ, վստահություն է ներշնչում, որ վերջը բարի է լինելու, և դժբախտության դեպքում սփոփում է նրանց»³:

¹ Օրինակ՝ մահը հաղթահարելու իրենց հույսերը եգիպտացիները կապել են մարդու մարմինը զմռսելու գաղափարին, որ այն չի քայքայվելու: Հրեաներն ընդունել և համակերպվել են մահվան գաղափարին՝ իրենց փարատելով այն սպասումով, որ մարդկությունն ի վերջո հասնելու է երջանկության և արդարության թագավորության: Քրիստոնեությունը մահն իրական չի համարում՝ դժբախտ մարդուն մխիթարելով հանդերձյալ կյանքի խոստումով: Է. Ֆրոմը ընդգծում է, որ իր դարը հերքում է մահը, այնինչ մահվան գիտակցումը պետք է դառնա կյանքի ուժեղագույն խթան, մարդկային համերաշխության հիմք: Ինչքան էլ մարդը փորձի ժխտել, մահվան երկյուղն ապրում է մեր մեջ, և այդ վախը դառնում է մեր ապրումների աղքատության պատճառը, մեր խելահեղ ձգտումը դեպի կյանքը: Ըստ Ֆրոմի՝ **պատրանքները** հենակներ են նրանց համար, ովքեր չեն կարողանում քայլել: Անհատի բարձրագույն ուժը հիմնված է անձի առավելագույն զարգացման վրա, ինչն էլ ենթադրում է առավելագույն ինքնաճանաչողություն, տե՛ս Զ. Փրոմմ, *Догмат о Христе*, с. 372.

² **Ֆրեյդ Զ.**, Հոգեվերլուծության ներածություն, Ե., 2002, էջ 420:

³ **Նույն տեղում:**

Ի տարբերություն Ֆրեյդի՝ Ֆրոմը կրոնին և նրա ազդեցությանը բուլրովին այլ դեր ու նշանակություն է վերագրում՝ մեծ հետաքրքրություն դրսևորելով տարբեր կրոնական համակարգերի և դրանց վերլուծությունների հանդեպ: Ժամանակակից քաղաքակրթական հիմնախնդիրների խորքային վերլուծությունը նա դիտարկում է սոցիալական հոգեբանության տիրույթում: Այդ համատեքստում հասարակարգերի փոփոխություններն ու զարգացումը (հատկապես կապիտալիզմի) ուղեկցվում են հոգեբանական մթնոլորտի զգալի փոփոխություններով, նոր արժեքների երևան գալով, աշխատանքի հանդեպ նոր վերաբերմունքով: Մարդը դառնում է միայնակ. ամեն բան արդեն պայմանավորվում է ոչ թե նրա ավանդական կարգավիճակով, ինչպես ընդունված էր միջնադարյան հասարակարգում, այլ միայն նրա սեփական ջանքերով, նրա մասնավոր նախաձեռնությամբ: Անձի էության և կեցության ճանաչողության և բացահայտման գործընթացում Ֆրոմը հիմնական շեշտը դնում է մարդու ինքնաճանաչողության վրա. «Մեր ժամանակներում հոգեբանության ժողովրդականությունը գնալով մեծանում է, ինչը շատերն են ողջունում, քանի որ դրանով մենք մոտենում ենք մի դարաշրջանի, որը կկարողանա իրականացնել «դելիյան» կոչը՝ Ճանաչի՛ր ինքդ քեզ»²: Մեծանուն հոգեբանը մարդու ինքնաճանաչումը դիտարկում է իբրև մտքի, զգացմունքի վերաարժևորման, վերակողմնորոշման գործընթաց: Ընդ որում, ինքնավերլուծության մեթոդով միայն կարելի է օգնել մարդուն, որ նա ճանաչի և գիտակցի իր ներքին դրական-կառուցողական և բացասական-քայքայիչ ուժերը, կարողանա կենտրոնացնել իր էներգիան, շրջանցի բացասական ուժերը և հասնի կառուցողական ուժերի հաղթանակին: Ըստ տեսաբանի՝ անձը կարող է համակողմանիորեն ըմբռնվել միայն ողջ մարդկության պատմության լույսի ներքո, իսկ հոգեբանությունը պետք է հենվի մարդկային գոյության փիլիսոփայական-մարդաբանական հայեցակարգի վրա: Ֆրոմը նկատում է, որ ինքնաճանաչողության գաղափարը խո-

¹ Նոր շուկայական գործունեության մեխանիզմները համընկնում էին Կալվինի **նախասահմանվածության** մասին ուսմունքին, համաձայն որի՝ եթե մարդն ուզում է հասնել հնարավոր կատարելության, ապա պետք է ներդնի բոլոր ջանքերը, սակայն մինչ նրա ծնվելն արդեն նախասահմանված է՝ կփրկվի նա, թե ոչ: Այսինքն՝ սովորական շուկայական մի օրը դառնում է մարդկային աշխատանքի արդյունքների համար «դատաստանի օր», տե՛ս **Յ. Փրոմմ**, *Догмат о Христе*, с. 228.

² **Նույն տեղում:**

րապես արմատավորված էր հին հունական և հրեաքրիստոնեական ավանդույթներում, ինչպես նաև՝ Վերածննդի դարաշրջանում: Այդ գաղափարին են սերտորեն առնչվում Ու. Ջեյմսի և Զ. Ֆրեյդի հայացքները, որոնց շնորհիվ նաև հոգեբանության այդ դրական հայեցակարգը հարմարեցվեց ժամանակակից աշխարհին¹:

Այսպիսով, ինքնին հասկանալի է, որ մարդու մասին գիտելիքը կամ հոգեբանական գիտելիքը ժամանակակից հասարակության մեջ ձեռք է բերել հատուկ գործառույթ և շատ է տարբերվում «Ճանաչի՛ր ինքդ քեզ» հումանիստական կոչից: Ֆրոյդը պատկերավոր բնութագրում և նկարագրում է բուրժուական հասարակության սոցիալական հիվանդությունները՝ մատնանշելով, որ մարդու մտածողության մեջ գերիշխող են դառնում «ունենալ», «տիրապետել» հասկացությունները: Հոգեբանի փիլիսոփայական աշխարհայացքի հիմնաքարն այն համոզմունքն էր, որ «**Մարդը իր չէ**: Նրան հնարավոր չէ բաժանել մասերի՝ առանց վնասելու կամ վտանգելու նրա ներաշխարհի կայունությունը: Նրան հնարավոր չէ արհեստականորեն վերարտադրել: Ինչքան շատ ենք փորձում թափանցել մեր կամ ուրիշ մարդու էության խորքերը, այնքան ավելի ենք հեռանում մարդու մասին բացարձակ գիտելիք ունենալու նպատակից: Սակայն մենք նորից ու նորից փորձում ենք թափանցել մարդկային հոգու գաղտնարանները, գտնել ուրիշի հոգու միջուկը, որը կոչվում է **Նա**»²:

Ֆրոյդի փիլիսոփայական աշխարհայացքում, Մարքսի ազդեցությամբ, փիլիսոփայությունը պետք է անդրադառնար նաև հասարակական-քաղաքական իրատեսական հիմնահարցերին: Սրանից հետևում է, որ քննադատության թիրախ են դառնում կապիտալիստական հասարակության մեջ մարդու օտարման հարցերը, որոնք քննվում են դեռևս հեգելյան և ֆոյերբախյան տեսություններում: Ֆրոյդը մարդու՝ հասարակությունից օտարման հիմքը համարում է տնտեսության և աշխատանքի օտարումը, որի պատճառներից մեկն էլ մասնավոր սեփականությունն է, և որի վերացումն էլ նշանակում է օտարման հաղթահարում: Ֆրոյդի համար միանշանակ է մարդու սոցիալիզացիան, նրա ընդգրկվածությունը ընդհանուր-միասնական հասարակական գործընթացներում, որից էլ բխում է ընդհանրացնող եզրահանգումը. «Մարդը չի կարող ապրել առանց մյուսների հետ համագործակցության: Ցանկացած հասարակու-

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 159:

² **Նույն տեղում**, էջ 161:

թյան մեջ մարդը միավորվում է մյուսների հետ, որպեսզի գոյատևի, պաշտպանվի բնության վտանգներից, թշնամիներից և հնարավորություն ունենա աշխատելու և կյանքի համար անհրաժեշտ միջոցներ ստեղծելու: Մեկուսացումը առաջ է բերում ինտենսիվ տագնապ, կասկած, անվստահություն: Մարդը մենակ է, ազատ, անօգնական ու վախեցած: Նման ազատությունը մարդու համար դառնում է անեծք: Մարդու առողջ գոյության համար անհրաժեշտ է մեկ ուրիշ մարդ: Անգամ Ռոբինզոնը ուներ իր Ուրբաթին, առանց որի նա կցնորվեր կամ կմեռներ»¹: Հակադրվելով Ֆրեյդին, որը սոցիալական ամեն ինչ հանգեցնում էր բնազդներին, ֆրոյդյան հայեցակարգը պահանջում է անդրադառնալ և՛ առողջ, և՛ հիվանդ հոգեկան վիճակներին, որոնք կապում է մշակութային գործոններին, հասարակության մեջ իշխող հարաբերություններին: Քննադատելով կապիտալիստական հասարակությունը՝ Ֆրոյդը հոգեկան հիվանդությունները (նաև հիվանդներին) կապում է հենց կապիտալիզմի հետ, որոնց հակադրում է «առողջ հասարակությունը», որի ներսում բացակայում է շահագործումը: «Փախուստ ազատությունից» գրքում Ֆրոյդը, շարադրելով իր սոցիալական փիլիսոփայության հիմնադրույթները, նկատում է, որ գաղափարախոսությունը և մշակույթը նույնպես սոցիալական արմատներ ունեն: Այս պարագայում վերլուծաբանը համոզված է, որ պետք է գտնել անհատական և սոցիալական հոգեբանությունները միավորող ուղիներ. նա համադրում է երկու ուղղությունների հիմնարար գաղափարները՝ Մարքսի և Ֆրեյդի ուսմունքները՝ իրագործելով այն գլխավորապես հոգեվերլուծության «սոցիալիզացիայով»: Ֆրոյդը ոչ թե նսեմացնում է Ֆրեյդի մոտեցումների արժեքը, այլ պարզապես ցույց է տալիս այն հակադրությունը, որ ակնհայտորեն դրսևորվում է իր և Ֆրեյդի տեսակետներում: Իր աշխատության նպատակը համարելով ընդհանուր հասարակական զարգացման գործընթացում հոգեբանական գործոնների դերի ընդգծումը՝ Ֆրոյդը փաստում է, որ իր վերլուծությունը հիմնվում է Ֆրեյդի մի շարք հիմնարար հայտնագործությունների վրա, որոնք հաստատում են, որ մարդկային բնավորության ձևավորման գործում ենթագիտակցությունն ունի մեծ դեր, ինչը պայմանավորված է նաև արտաքին ազդեցություններով: Այդ պատճառով էլ Ֆրոյդն առանձնացնում է այն գլխավոր տարբերությունները, որոնք կան իր մոտեցման և

¹ **Նույն տեղում**, էջ 196-197:

Ֆրեյդի դասական հայեցակարգի միջև¹: Վերլուծաբանը իրավացիորեն հավելում է, որ Ֆրեյդից առաջ ոչ ոք այդքան ուշադրություն չէր դարձրել իռացիոնալ, ենթագիտակցական ուժերի ուսումնասիրությանը, թեև այդ ուժերն են զգալի չափով պայմանավորում մարդկային վարքը: Ֆրեյդը և նրան հետևողները բացահայտեցին ոչ միայն մարդկային հոգեբանության ենթագիտակցական շերտը, որի գոյությունը հերքում են ռացիոնալիստները, այլև ցույց տվեցին, որ այդ իռացիոնալ երևույթները կարող են ունենալ ռացիոնալ բացատրություն: Ըստ Ֆրեյդի՝ երազների լեզուն, սոմատիկ նախանշանները և բնավորության ողջ կառուցվածքը արտաքին աշխարհի ազդեցության հանդեպ պատասխան արձագանք են, դրանցում հատկապես կարևորվում է այն, ինչ տեղի է ունեցել մանկական վաղ տարիքում: Նա իր տեսությունը կառուցում էր որպես փիլիսոփա՝ գործնական կիրառությունը իրականացնելով որպես բժիշկ: Ֆրեյդը համոզված էր, որ մարդն իր բնույթով հակասոցիալական է, հասարակությունը նրան վարժեցնում է՝ թույլ տալով որոշակիորեն բավարարել իր կենսաբանական պահանջմունքները, սակայն հասարակության գլխավոր խնդիրը մարդու ներքին անփոփոխ ազդակների (իմպուլս) «մաքրումն» է և սահմանափակումը: Հասարակական ճնշման ժամանակ այդ ազդակները, ներքին հակումները վերածվում են ձգտումների, ձեռք են բերում մշակութային արժեք՝ դառնալով մշակույթի հիմք: Տեղի է ունենում մի տարրինակ անցում ներքին ազդակների ճնշված վիճակից դեպի քաղաքակրթական վարք, որը Ֆրեյդը կոչում է **սուբլիմացիա**: Ֆրոմը վիճարկում էր Ֆրեյդի այն մոտեցումը, որը մարդուն մշտապես դիտարկում էր այլ մարդկանց հետ ունեցած հարաբերությունների սահմաններում, ինչպես նաև տնտեսական փոխառնչությունների ոլորտում, ինչը բնորոշ է կապիտալիստական հասարակությանը: Անհատը սկզբում միայնակ տնտեսական փոխհարաբերությունների մեջ է մտնում այլ մարդկանց հետ՝ ձգտելով հասնելու առաջնային նպատակին, այն է՝ **վաճառել – գնել**: Այսինքն, ըստ Ֆրեյդի, մարդկային փոխհարաբերությունների դաշտը նույնությամբ կրկնում է տնտեսական հարաբերությունների համակարգը և նման է «շուկայի», որը ձևավորվում է կենսաբանական պահանջմունքների փոխադարձ բավարարմամբ: Սակայն, Ֆրոմի համոզմամբ, հոգեբանության առանցքային հիմնախնդիրը անհատի՝ արտա-

¹ Տե՛ս **Фромм Э.**, Бегство от свободы, М., 2006, ст. 187.

² Տե՛ս **նույն տեղում**:

քին աշխարհի հետ ունեցած առանձնահատուկ կապի բացահայտումն է և ոչ թե մարդկային հոգու այս կամ այն բնազդային պահանջմունքի բավարարումը: Մարդկային և՛ ամենամաքուր, և՛ ամենատգեղ հակումները չեն բխում միայն մարդկային բնության կենսաբանական հիմքից. դրանք նաև հասարակության մեջ անձի ձևավորման գործընթացի արդյունք են: Այլ կերպ ասած՝ ըստ տեսաբանի՝ հասարակությունը իրականացնում է ոչ միայն «զսպող», «ճնշող» մեխանիզմի դեր, այլև հանդես է գալիս որպես **անձ** ձևավորող գործոն: Այս կապակցությամբ Ֆրոմը պարզաբանում է, որ մարդու բնավորությունը, նրա կրքերն ու տազնապները սոցիալական մշակույթի հետևանք են: Ըստ էության՝ մարդն ինքը մարդկային ջանքերի և գործունեության արդյունք է, որի համապարփակ ամփոփումն ու «գրանցումը» ժամանակի մեջ կոչվում է **պատմություն**¹: Ըստ այդմ՝ է. Ֆրոմը փաստում է, որ սոցիալական հոգեբանության գլխավոր խնդիրը պատմության ընթացքում մարդու ձևավորման գործընթացի առանձնահատկությունները պարզելն է: Նրա կարծիքով սոցիալական հոգեբանությունը պետք է բացատրի՝ ինչու և ինչպես են ծնվում նոր ընդունակությունները, նոր կրքերը, նոր զարգացումները: Պետք է բացահայտել, օրինակ, այն պատճառները, թե ինչու Վերածննդի դարաշրջանից հետո մարդիկ անհագ ձգտում են դրսևորում **փառքի նկատմամբ**, ինչը բնորոշ չէր միջնադարի մարդուն: Հենց Վերածննդի դարաշրջանում է մարդկանց մոտ զարգանում բնավորության գեղեցկության գիտակցումը, ինչը նախկինում նույնպես չկար: Եվ ոչ միայն մարդիկ են կերտում պատմությունը, այլև պատմությունն է կերտում մարդուն, և սոցիալական հոգեբանությունը այդ ամենը պայմանավորող պատճառների բացահայտողն ու մեկնաբանողը պետք է լինի: Մեծանուն հոգեբանը համամիտ չէ Ֆրեյդի այն տեսակետին, թե պատմությունը այնպիսի հոգեկան ուժերի գործողության արդյունք է, որոնք չեն ենթարկվում սոցիալական ազդեցության: Այդ առումով Ֆրոմը հակադրվում էր ոչ միայն Ֆրեյդին, այլև սոցիոլոգիական այն բոլոր տեսություններին ու դպրոցներին, որոնք ժխտում են հասարակական զարգացման դինամիկայում մարդկային գործոնի դերը և փորձում են սոցիոլոգիայից հանել ցանկացած հոգեբանական խնդիր: Մյուս կողմից Ֆրոմը այդ տեսությունների ընդհանուր սխալը համարում էր այն, որ նրանցում իշխում է այն համոզմունքը, թե մարդկային բնությունը չունի իր սեփական դինամիկան, և մարդկային հոգե-

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 180:

բանության փոփոխությունները կարելի է բացատրել միայն իբրև նոր սովորությունների զարգացում, որն առաջ է եկել փոփոխված նոր պայմաններին հարմարվելու գործընթացում: Գործնականում Ֆրոմը նշում է, որ Ֆրեյդը մշտապես ձգտել է միավորելու բարոյականությունն ու մշակույթը, ինչի ուղիղ դրսևորումը հենց հոգեվերլուծական շարժումն էր: Այդ շարժման գաղափարն ու հիմնական համոզմունքն այն էր, որ «Որտեղ եղել է **Իդը**, այնտեղ պետք է լինի **Էգոն**», իսկ նպատակը բանականության օգնությամբ մարդու ազատագրումն էր բնազդներից և իռացիոնալ մղումներից: Եվ քանի որ հոգեվերլուծությունը պետք է դառնար մարդուն ազատագրելու միջոց, ուստի հոգեվերլուծաբան-բժշկի և հիվանդի փոխհարաբերությունները պետք է հենվեն ճշմարտության հանդեպ սիրովրա. միայն դա կհանգեցնի իրականության ճշմարիտ ընկալման և կվերացնի ամեն տեսակ ամոթ ու խաբեություն²:

Հիմնականում մերժելով ֆրեյդյան մոտեցումը՝ Ֆրոմը, այնուամենայնիվ, որոշ դրույթներում համաձայն էր նրա հետ: Նա ընդունում էր, որ հստակորեն սահմանել հոգեբանության սահմանները նշանակում է նաև գիտակցել այն վտանգը, որը կարող է առաջանալ, երբ անտեսվեն այդ սահմանները: Ընդ որում՝ որոշակի վերապահությամբ ընդունում է նաև այն մոտեցումը, որ ժամանակակից մարդը միայնակ է, լի վախերով և ուրիշին սիրելու ունակություն չունի: Նա ուզում է մոտ լինել մարդկանց, սակայն հեռացած է նրանցից և չի կարող հասնել անհրաժեշտ մտերմության: Ֆրոմը կարծում էր, որ մարդու էվոլյուցիան դեռ չի ավարտվել, և մարդկային էության շատ ու շատ կողմեր դեռ նոր դրսևորման հնարավորություն են փնտրում: Մյուս կողմից, մարդու հիմնական արժեքը Ֆրոմը հռչակում էր սիրելու ունակությունը և զարգացնում էր իր այսպես կոչված սիրո փիլիսոփայությունը, որը կնպաստեր մարդկանց միջև գոյություն ունեցող տարանջատման վերացմանը, կվերականգներ մարդու ներքին ներդաշնակությունը: Այսպիսով, սերը դիտարկելով իբրև բարձրագույն հումանիստական արժեք, այն իմաստավորելով մարդաբանական և էկզիստենցիալ չափումներով՝ Ֆրոմը ինչ-որ առումով մոտենում է քրիստոնեական «Սիրի՛ր մերձավորիդ» կարգախոսին, որը հումանիստական մտածողության հիմնական գաղափարներից է:

¹ Տե՛ս **նույն տեղում**, էջ 190-191:

² Տե՛ս **նույն տեղում**, էջ 113, 121:

Ֆրոմը անդրադառնում է նաև հույսի ֆենոմենին՝ այն համարելով կյանքի կառուցվածքի ներքին տարր, մարդկային ոգու դինամիկա: Ըստ նրա՝ մարդը մշտապես հույս «կրող» էություն է, և հենց այդ հումանիստական արժեքներն էլ (սեր, հույս) կարող են մարդու հոգևոր վերածընման և բարոյական նորոգման հիմքը դառնալ: Իհարկե, Ֆրոմը ընդունում է, որ ժամանակակից դարում սիրո հաղթանակը դեռ շատ հեռու է, մարդկանց միջև հաստատված են ամենատարբեր փոխհարաբերություններ, սակայն մարդկանց միջև գլխավոր կապը «սրտերի» միացումն է, որը միշտ մնում է անհնարին: Տեսաբանը պնդում էր, որ մտերմություն որոնելով՝ մարդը ձգտում է գիտելիքի: Հոգեբանությունը փոխարինում է սիրուն, ընկերությանը, անգամ ինտիմ հարաբերություններին, դառնում է ապաստան՝ օտարված մարդու համար: Ֆրոմը նկատում է, որ իրական կյանքին փոխարինող հոգեբանության այդ գործառույթն էլ հենց նպաստում է հոգեվերլուծության ժողովրդայնացմանը մանավանդ ժամանակակից աշխարհում, որտեղ հասարակական և մարդկային հարաբերությունները մտնել են փակուղի: Լուսաբանելով ժամանակակից աշխարհում հասարակությունից մարդու օտարման խնդիրը՝ վերլուծաբանը պարզաբանում է, որ մարդու համար ի հայտ են գալիս «երկրպագության նոր օբյեկտներ»՝ տնտեսական հաջողություններ, սոցիալական վարկանիշ, որ կարող է հասնել անգամ անհատական նարցիսիզմի: Ֆրոմը բացահայտում է մարդու օտարման այնպիսի ձևեր, որոնց հետևանքով մարդկային հարաբերությունները դառնում են ապրանքային հարաբերություններ, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ տեխնոլոգիական զարգացումները ներգործում են մարդու վրա՝ նրան վերածելով պասիվ սպառողի, այսինքն՝ օտարում կա և՛ արտադրության, և՛ սպառման ոլորտում: Այս ամենն ի վերջո հանգեցնում է մարդու ներսում էգոիզմի՝ որպես մարդկային վարքագծի շարժիչ ուժի, լայն դրսևորմանը: Անդրադառնալով էգոիզմի հոգեբանական վերլուծությանը՝ տեսաբանը ժամանակակից մարդու արարքներում առանձնացնում է նաև շահի մոտիվացիան՝ նշելով, որ էգոիզմը ագահություն է. «էգոիզմը ոչ թե եսասիրությունն է, այլ դրա հակադրությունը: ... Ագահությունը անհատակ տակառ է, մարդուն մաշող մի տակառ. մարդն իրեն սպառում է, անհամար ջանքեր գործարում՝ բավարարելու իր պահանջմունքները, սակայն երբեք չի հասնում դրան»¹: Որպես կանոն՝ մարդ-հասարակություն հիմնախնդրի շրջանակ-

¹ **Фромм Э.**, Догмат о Христе. ст. 272.

ներում Ֆրոմը «հումանիստական հոգեվերլուծության» նպատակը համարում է մարդուն կենսական հարցերում արդյունավետ կողմնորոշելը, ինչը կնպաստի մարդու ներքին հնարավորությունների զարգացմանը, կօգնի նրան ճիշտ կողմնորոշվել, ինքնակազմակերպվել, պաշտպանել սեփական Եսը, ազատվել պատրանքներից, ձեռք բերել արժանապատվություն: Այսպիսով, Ֆրոմի սոցիալական փիլիսոփայության նպատակը հասարակության **հումանիզացիան** է:

Այս համատեքստում է. Ֆրոմը անառարկելի է համարում այն, որ մարդու բնության բացահայտմանն ուղղված փիլիսոփայական-հոգեբանական գոյություն ունեցող տեսությունները, նույն նպատակը հետապնդելով, ընդհանուր մոտեցումներով հանգելով նույն արդյունքին, այնուամենայնիվ, հակադրվում են իրենց մեթոդաբանությամբ և նպատակին հասնելու ուղիների ընտրությամբ: Արմատապես չկտրվելով իր ուսուցչի՝ Ֆրեյդի տեսությունից, Ֆրոմն այնուամենայնիվ սկիզբ դրեց նոր տեսության՝ նեոֆրեյդիզմին, և այս երկու տեսությունների զարգացումը առ այսօր ուղեկցվում է սուր բանավեճերով: Դա են վկայում Ադլեր – Յունգ, Ռեյխ – Ադլեր, Խորնի – Յունգ ծավալուն և սուր բանավեճերը: Այնուամենայնիվ, բոլոր կողմերն էլ համաձայն էին մի հարցում. պետք է ամեն գնով պահպանել անձի, մշակույթի, հասարակության հետազոտման հոգեվերլուծական մեթոդը, որի շնորհիվ հնարավոր է հասնել ցանկալի արդյունքների: Մարդը կընդունի քննադատական ինքնավերլուծությունը, կվերանան պատրանքներն ու ներհոգեկան խռովքը, կբացահայտվեն մարդու վրա քաղաքակրթության ներգործության բացասական հետևանքները, անձի բարոյական հետընթացի պատճառները:

Այսպիսով, սա մի ընդհանուր տեսություն էր, որը միմյանց էր կապում անհատի հոգեբանությունը և սոցիալական համակարգի կառուցվածքային փոփոխությունները՝ ցույց տալով «հումանիստական հասարակության» կառուցման ուղիները: Ինչպես նկատում է Վ. Լեյբինը. «Մարդու զարգացման բարոյական, մշակութային և սոցիալական սահմանափակումները քննադատելու համար էլ հոգեվերլուծությունը շարունակում է ուշադրություն գրավել: Մարդկային հոգու բժշկման հոգեվերլուծական մեթոդի նպատակը մարդու՝ ժամանակակից աշխարհում ունեցած դերի ու նշանակության գիտակցումն է, ոչ թե սոցիալական իրակա-

նության վերափոխումը»¹: Սակայն այս մոտեցումը ուտոպիստական դատողություն է մարդու գոյության և սոցիալական համակարգի հնարավոր հումանիզացիայի վերաբերյալ, քանի որ դա հնարավոր չէ առանց դրանց արմատական հիմքերի վերակազմավորման: Գրեթե նույն հայեցակարգն էր ընկած նաև ֆրեյդիզմի հիմքում, ըստ որի՝ հասարակական կեցության փոփոխությունները հնարավոր են միայն մարդու բարոյական կատարելագործման, կյանքի նոր արժեքների ներմուծման, հոգեկան-հոգևոր կողմնորոշման վերանայման ճանապարհով: «Նոր մարդու» ի հայտ գալու համար անհրաժեշտ է փոխել նրա գոյության սոցիալական պայմանները, իսկ նման փոփոխությունների հիմքը մարդու ինքնակատարելագործումն է: Ֆրեյդն ու նրա հետևորդները ձգտում էին լուծելու այդ հակասությունը՝ ներմուծելով հոգեվերլուծության տարբեր ձևեր, որոնք կօգնեն մարդուն ձեռք բերելու քննադատական մտածողություն, հրաժարվելու պատրանքներից և զարգացնելու «նոր գիտակցություն»: Սակայն ֆրեյդիզմը այդպես էլ չկարողացավ հասնել իր այդ նպատակի բացարձակ իրականացմանը:

Արդեն 1970-ական թթ. Է. Ֆրոմը, իբրև նեոֆրեյդիզմի առաջատար տեսաբան, իրավացիորեն նկատում է, որ հոգեվերլուծությունը ճգնաժամ է ապրում և չի արդարացնում իրեն, քանի որ հարմարվել է բուրժուական հասարակության պահանջմունքներին, ինչը, սակայն, չի նշանակում, որ պետք է հրաժարվել անձի, հասարակության, մշակույթի հետազոտման հոգեվերլուծական մեթոդից: Ֆրոմը հույս էր հայտնում, որ եթե հոգեվերլուծությունը կարողանա շրջանցել կոնֆորմիզմի դիրքերը և վերագտնել իր քննադատական բովանդակությունը, ապա կարող է մեծ ներդրում ունենալ մարդու ճանաչողության նորորյա գործընթացներում:

Անձի հոգեկան զարգացման ակունքների որոնումներում Է. Ֆրոմի տեսության՝ ֆրեյդիզմին հակադրվող արմատական հիմնադրույթներից մեկն էլ այն է, որ կարևորվում էր կրոնի դերն ու նշանակությունը մարդու էության բացահայտման գործընթացում: Այդ առումով Ֆրոմը առավելապես հետևում էր Կ. Գ. Յունգի տեսակետին: Եթե Ֆրեյդը կրոնը համարում էր ցնորական ըմբռնումների խթան, մտածողության արգելակ և խաբկանք, ապա Յունգը անհատի առողջ հոգեկան աշխարհ ունենալու

¹ **Лейбин В. М.**, Психоанализ и философия неопрейдизма, М., 1977, ст. 241.

գործում կարևորում էր Աստծու և հավատի անհրաժեշտությունը¹: Ֆրոմը նույնպես կարևորում է կրոնական նորմերի նշանակությունը, որոնք սկզբունքային դեր են կատարում բարոյականության, հասարակության, ընտանիքի կայունության պահպանման և ամրապնդման գործում: Նա, ինչպես և Յունգը, ընդունում էր, որ մարդուն ի սկզբանե տրված է աստվածայինի նախատիպը, որն անհրաժեշտ գործոն է նրա հոգեկան աշխարհի ամբողջականությունը անխաթար պահելու և զարգացնելու համար: Եթե դասական հոգեվերլուծությանը բնորոշ էր ընդգծված բիոլոգիզմը, ապա հոգեվերլուծության նոր ներկայացուցիչներից շատերը (Է. Ֆրոմ, Կ. Յունգ, Կ. Խորնի, Գ. Սալլիվեն) իրենց ուշադրությունը առավելապես կենտրոնացրին սոցիալ-մշակութային գործընթացների, մարդկային վարքի մոտիվացիայի, ներանձնային կոնֆլիկտների, ինչպես նաև կրոնական թեմաների վրա: Ֆրոմը հոգեբանության կրոնական ակունքները մեկնաբանելիս հիմնավորում էր այն տեսակետը, որ մինչև հոգեթերապիայի ի հայտ գալը մարդու հոգեկան և հոգևոր առողջության համար պատասխանատու էր կրոնը. տարբեր կրոններում դարեր շարունակ կուտակվել են գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են ժամանակակից հոգեբանին, իսկ հոգևոր սպասավորների դերն ու նշանակությունն էլ ինչ-որ առումով համընկնում են ժամանակակից հոգեբույժի գործառույթներին: Ֆրոմը ընդունում է, որ ժամանակակից աշխարհում մարդու հոգու հիմնախնդրով զբաղվում է մասնագետների երկու խումբ՝ հոգևորականները և հոգեվերլուծաբանները²: Նշանակալից է այն հանգամանքը, որ մեծանուն հոգեբանի համար կրոնը միայն հետազոտության օբյեկտ չէ, այն հոգեթերապիայի «գործընկերն» է մարդու ճանաչողության գործընթացում: Ֆրոմը կրոնի հայեցակարգի տեսական-մեթոդաբանական հիմքում դնում է մարդու տեսությունը, համաձայն որի՝ մարդն իրեն պետք է զգա ինչ-որ համակարգի մաս, որը նրա կյանքին կհաղորդի իմաստ, կմիավորի աշխարհի հետ: Նա հատուկ նշանակություն է տալիս միջանձնային հարաբերություններին ու կապերին և դրանց համատեքստում մարդկային վարքի մոտիվացիոն մեխանիզմների հարցին: Այդ ամենով է պայմանավորված այն, որ Ֆրոմի հոգեբանության հայեցակարգի կրոնաբարոյական բովանդակությունը և կրոնի հայեցակարգը հասարակության

¹ Տե՛ս **Սարգսյան Գ.**, Կրոնի հոգեբանության Կառլ Յունգի հայեցակարգը, Եր., 2016, էջ 64-65:

² Տե՛ս **Фромм Э.**, Догмат о Христе. ст. 225:

հումանիզացիան է: Զարգացնելով այս մոտեցումը՝ նա լավագույնս ցույց է տվել, որ կրոնի ուսմունքի առանձնահատկությունը ըստ էության փիլիսոփայական-հոգեբանական մոտեցումն է, կրոնի ծավալուն, լայն մեկնաբանությունը. «Կրոն ասելով ես հասկանում եմ հայացքների և գործողությունների ցանկացած համակարգ, որին հետևում է մարդկանց որոշակի խումբ, և որն անհատին տալիս է կողմնորոշվածության համակարգ և պաշտամունքի առարկա»¹: Այս կապակցությամբ վերլուծաբանը հավելում է, որ կրոնը ձգտում է լուծելու այս աշխարհում մարդու առանցքային խնդիրները, քանի որ ի սկզբանե մարդը գտնվում է հոգեբանական այնպիսի իրադրության մեջ, որն անխուսափելիորեն նրա առջև դնում է որոշակի հարցեր և ստիպում գտնել պատասխաններ: Նման մոտեցումն էլ հիմք է տալիս այնպիսի, թե պարտադիր չէ, որ կրոնը կապված լինի թե՛ իզմի հետ, որ Աստծու գաղափարը սիմվոլիկ է, և անաստվածությունը կրոնամերժություն չէ: Քննության առնելով կրոնական ամենատարբեր համակարգերը՝ Ֆրոմը ընդունում էր միաստվածության վրա հիմնվող կրոնական համակարգը, որի կենտրոնում Աստվածն է և նրան ենթակա գերբնական ուժերը: Նա նշում է. «Մենք հակված ենք մոնոթեիստական կրոնը համարելու բոլոր մյուս կրոնների ըմբռնման և արժևորման չափանիշ»²: Ֆրոմը նաև նկատում է, որ մարդու հոգևոր կյանքի և ներհոգեկան գործունեության վրա մեծ է սոցիալ-տնտեսական ինստիտուտների ազդեցությունը: Նա կարևորում է նաև այն փաստը, որ մարդը, ընդլայնելով իր ազատությունը տեխնոլոգիական հնարավորությունների միջոցով, ընկնում է այդ ազատության մեծ բեռի տակ, խզում է իր կապը կրոնի և ավանդական աստվածությունների պաշտամունքի հետ, նոր կուռքեր է ստեղծում իր համար, խոնարհվում դրանց, օտարվում սեփական աշխատանքի արդյունքներից, մյուս մարդկանցից, ինքն իրենից: Փորձելով գտնել այդ ամենի պատճառների բացատրությունը՝ Ֆրոմն իր տեսական դատողությունների կենտրոնում դնում է մարդու օտարման համախտանիշը՝ իր լայն ընդգրկումներով, և մարդկային հոգու բժշկման ուղիների փնտրտուքը: Մեծ փիլիսոփա-հոգեբանը համոզված էր, որ «մարդն՝ իր չէ», և մարդասիրական էթիկան ու արժեքները առաջ կբերեն հոգևոր վերածնունդ, ներքին բարոյականության նորոգում, մարդու ներուժի ճիշտ ինքնադրսևորում: Այդ ամենի ընդհանրացմամբ էլ նա հանգում է այն եզ-

¹ **Фромм Э.**, Психоанализ и религия // Фромм Э. Иметь или быть? М. 1990, ст. 236.

² **Նույն տեղում**, էջ 8:

րակացության, որ բուրժուական քաղաքակրթության հոգևոր միջավայրի առողջացման, հասարակական ճգնաժամի պատճառների վերացման համար անհրաժեշտ են անձի ինքնակատարելագործումը, ճիշտ ինքնաճանաչողությունն ու գնահատումը, սուբյեկտի ակտիվությունը: Մարդը կկարողանա հասնել բարոյական և ֆիզիկական «նորոգման», երբ գիտակցի, որ նյութապաշտությունը, դրանից բխող վախերն ու օտարումն իրեն դեպի կործանում են տանում:

***Բանալի բառեր** հոգեվերլուծություն, էկզիստենցիալ դիստրոմիա, ավերարար և հումանիստական կրոն, օտարում, մեկուսացում, աճի և անկման բարդույթ:*

НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ ГУМАНИСТИЧЕСКОГО ПСИХОАНАЛИЗА КОНЦЕПЦИИ РЕЛИГИИ Э. ФРОММА

Գոար Տարգսյան

***Ключевые слова** — гуманистический психоанализ, экзистенциальная дихотомия, авторитарная и гуманистическая религия, отчуждение, изоляция, синдром роста и распада.*

Концепция религии Э. Фромма заключается в том, что религия понимается им как общечеловеческий феномен, и служит, прежде всего, утверждению гуманистических идеалов, целям познания человеческой личности, как с философских, так и психологических позиций. Религия, понимаемая как потребность в системе ориентации и объекте служения, представляется Фромму неотъемлемой частью мира личности.

SEVERAL CHARACTERISTICS OF FROMM'S CONCEPT OF HUMANISTIC PSYCHOANALYSIS

Gohar Sargsyan

***Keywords:** humanistic psychoanalysis, existential dichotomy, authoritarian and humanistic religion, alienation, isolation, growth and decay syndrome.*

E. Fromm's concept of religion is that it is considered to be a universal human phenomenon, and serves, first of all, to assert humanistic ideals, and to understand the human personality both from a philosophical and psychological standpoint. Religion is understood as a need for a system of orientation and an object of service, and is considered by Fromm to be an integral part of the individual's world.